ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

1-ը հոկտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Հոկտեմբերի 1-ի՝
Տարեցների միջազգային օրվա առիթով

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից հոկտեմբերի 1-ը նշվում է որպես Տարեցների միջազգային օր: Կարևորելով օրվա խորհուրդը, ավագ սերունդների փորձը, նրանց անփոխարինելի տեղն ու դերը մեր կյանքում՝ շնորհավորում եմ բոլոր տարեցներին:

Սիրելի՛ տատիկներ, պապիկներ.

Դուք յուրաքանչյուրիս ուշադրության կենտրոնում եք և արժանի ջերմության ու հոգատարության յուրաքանչյուր օր: Իսկ այսօր հատկապես լավագույն առիթն է մեր երախտագիտությունը հայտնելու համար: Մեր ավագ սերունդը ապրել, աշխատել ու արարել է տարիների նվիրվածությամբ, բազում դժվարություններով և արժանի է մեծարման ու խորին հարգանքի:

Առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքի տարեցներին. Ինձ համար առաջնային հարց է մեր համայնքի տարեցների համար հարմարավետ պայմանների ստեղծումն ու զբաղվածության ապահովումը: Իմ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է Աբովյանի տարեցների զբաղմունքի կենտրոնը, որտեղ համայնքապետարանի ոլորտային պատասխանատուների հետևողական աշխատանքով փորձում ենք ապահովել տարեցների համար հարմարավետ, հանգիստ, անմիջական ու խաղային միջավայր:

Սիրելի՛ տարեցներ.

Կրկին ջերմորեն շնորհավորում եմ ձեզ և մաղթում, որ լինեք առողջ ու երջանիկ, վայելեք անհոգ ծերություն և շրջապատված լինեք հարազատների մեծ սիրով ու հոգածությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ